ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /վառելիքի ձեռքբերում/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 04.05.2018թ. ժամը 15.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Վ. Ավետիսյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Հ. Հարությունյանը
Հ. Հակոբովը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Համբարձումյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 27,04.2018թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 25,04.2018թ. թիվ 2 որոշմամբ, համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, էլեկտրոնային փոստի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությունը սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացրել է էլեկտրոնային փոստով /կցվում են/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/՝ **ընտրված մասնակից ճանաչել 1-ին և 2-րդ չափաբաժիններով՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

3.2. Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան
անդամներ՝ _____ Հ. Հարությունյան
_____ Հ. Հակոբով
_____ Ա. Համբարձումյան
քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան